

ՅԵՔՍՈՒԹԻՒՆ ԱՐՎԵՍՈՒԽ



ՍՈՒՐԵՆ ՀԱՍՄԻԿՅԱՆ

Հ. Մ. Մ. Ե. Տ., 1964

«...Համլետին խաղալ լի կարելի. պետք է լինել այն,  
նույնակի այնպիսին, ինչպիսին ստեղծել է նրան  
Շեքսպիրը: Բայց կարելի է առավել կամ նվազ շա-  
փով, պարզորեն կամ աղոտ հիշեցնել նրա ինչ-որ-  
կողմերը»:

Խ. ԳՈԽՉԱՐՈՎ

Կինոռեժիսոր Գ. Կողինցևի օրագրում, որը նա պահում էր «Համ-  
լետ» ֆիլմը պատրաստելու ընթացքում, մի այսպիսի գրառում կա. «Ոչինչ  
ավելի ապարդյուն չէ, քան այդ պիհսի համար կոնցեպցիաներ հորինելը:  
Ամենից արժեքավորն էլ այն է, ինչը հենց դուրս է մնում յուրաքանչյուր  
մեկնության տեսադաշտից... Պետք է հուսալ, որ կոնցեպցիաների ճարա-  
կից ես արդեն ապաքինվել եմ: Ժամանակն է գործով դրազվել»<sup>1</sup>:

Զշտապենք, սակայն, մեղագրել Գ. Կողինցևին «Համլետականի» և  
առհասարակ շեքսպիրագիտության կուտակած հարուստ փորձի անտես-  
ման կամ արհամարհման մեջ: Ու շփորձենք կշտամբել նրան տարրական  
անսկզբունքայնության համար, քանի որ ձեռնարկելով «Համլետի» կինո-  
բեմպրությունը, նա, այսպես թե այնպես, կոնկրետ մեկնությունների  
պիտի ենթարկեր իր հղացումը, այսինքն՝ որոշակի մի կոնցեպցիայի հան-  
գեր: Մանավանդ որ ֆիլմի ստեղծման աշխատանքին նախորդել էին նրա,  
իբրև բանասեր-հետազոտողի երկարամյա պրատումները: 1962-ին լույս  
տեսած իր «Շեքսպիրը մեր ժամանակակիցն է» գրքում Գ. Կողինցևը ման-  
րազնին քննության է առնում Շեքսպիրի ողջ ստեղծագործության և, մաս-  
նավորապես, «Համլետի» բոլոր հայտնի մեկնաբանումները:

«Համլետի» իր մեկնությունը Գ. Կողինցիք հղացել է տասնյակ տարիների ընթացքում։ Ֆիլմին նախորդող յարատեսակ մի փորձարկում հանգիսացավ նրա նույնանուն բնմագրությունը կենինդրապի Պուշկինի անվան թատրոնում՝ 1954 թվականին։ Նու երկար ժամանակ զննում էր իր մատագրությունը, կշռում անելիքը, որպեսզի կարողանա «սամնձել» «Համլետին»։

Սակայն կարող էր և այնպես ստացվել, ինչպես կանխադպում էր ինքը՝ հոսեան Գաննմարքին։ «Որքան ավելի ձգձգիս անելիքը, այնքան ավելի մղումներ կկործանվին, և վիթխարի մղումներ, որ սկզբում իրականանալի են թվում։ Եհմի ականավոր շատ վարպետների համար «Համլետ» երազանք է եղել ու երազանք էլ մնացել է եղել են և այնպիսի հղացումներ, ինչպես, օրինակ, Վլ. Նեմիրովիչ-Գանչենկովի բեմագրական նախադիմք, որ գարձել են շերսպիրագիտական փաստեր, բայց բեմում այդպես էլ միս ու արյուն չեն ստացել և չեն իրազործվել։ Տվյալ դեպքում նոպատակն իրադրություն է, Գ. Կողինցիք որոնումները տրամադրանական վախճանի հանգեցին, ի հայտ բերելով մի ֆիլմ, ուր ասես «աեղավորվել» է Շերսպիրի ողջ «Համլետը»։

Այս, Գ. Կողինցիք ստեղծած ֆիլմը տպագրում է նախ իր, այսպես ասած, տարողությամբ, Շերսպիրի «աշխարհի» աննախադեպ լայն վերաբարձրությամբ։ Խոսքն, իհարկե, բնագրի տեքստի լիակատար պահպանման մասին չէ, որն անհնար է ոչ միայն կիննմատոգրաֆի հնարավորությունների, այլև այդ երկի արդիական ընկալման իմաստով։ Խոսքն այլ բանի մասին է, թատերոգության գրեթե բոլոր տեսարանները, մուտիվները, կարելի է ասել, նույնիսկ յուրաքանչյուր իմաստանշումը պահպանելու ուժիսյորի ցուցաբերած վճռականությունը։

Իրեն կանոն, նշանավոր այդ երկի բնմագրման պրակտիկայում նման միտում չի նկատվել ոչ թատրոնում, ոչ էլ կինոյում։ Լուրենս Օլիվյեի ըստեղծած անդիխական հանրահայտ ֆիլմում, օրինակ, պարզապես չբացել են նողենկրանցն ու Գիլդենշտերնը։ Մյուժետային հարակից մոտիվների և որոշ կերպարների հապավումն այդ ֆիլմում հանգեցրել է «Մարդն աղնիվ է ծնվում» մենախոսության և «սրնգի» նշանավորագույն տեսարանի կրծատմանը։

Սակայն, արդյո՞ք այս և նույնանման ուրիշ դեպքերի առիթով կարելի է ասել, թե բնմագրող-մեկնարանները բարեխիղճ չեն զտնվել Շերսպիրի ստեղծագործության հանդեպ։

Բնավ երբեք։ «Համլետի» բնմագրան և Էկրանային ոչ-լրիվ վերծա-

նումը միշտ էլ բխել է շեքսպիրյան հերոսի անհատականության շարարաստիկ առեղծվածը կրահելու մղումից: Այն առեղծվածի, որի վրա ավելի քան երեք հարյուրամյակ «զլուխ են ջարդել» շատ մտածողներ: Դանեմարցու «Համաշխարհային թափիծը» իր վրա է գամել ոչ միայն արվեստագետների, այլև իմաստասերների, սոցիոլոգների, հոգեբանների ու շաղրափյունը, հրահրելով գիտական, երթեմն իրարամերժ մեկնաբանումներ ու տեսակետներ: Եվ որքան փաստարկված ու համոզիլ է երևացել այս կամ այն մեկնությունը, այնքան ավելի է, որքան էլ դա պարագորամ թվա, աշքի ընկել մնացորդը, այսինքն այն ամենը, ինչ դուրս է մնացել տվյալ մեկնության տեսադաշտից, բայց կա «Համլետում» ու Շուլցի տալիս ի մի բերել նրա մասին մեր դիտցածը:

Գ. Կովինցել ճիշտ է կուահել «Համլետի» ավանդական ընկալումների թերարժեքության բուն պատճառը, այն, որ դրանք խարսխված են եղել գլխավոր հերոսի բնահատկությունները բացատրելու, նրան անպայմանորեն այս կամ այն կոնկրետ բնորոշումը տալու ձգումանը: Եվ ճիշտ էլ, երբ Համլետի բնավորության մի որևէ հատկանիշին որոշիլ նշանակություն է արվել, իսկ մյուսները դիտվել են իրեն անկարենոր ու երկրորդական, կերպարն ինչ-ինչ կորուստներ է ապրել և հակասության մեջ մտել հենց Շեքսպիրի հետ:

Նույնիսկ «ուժեղ» և «թույլ» Համլետի բնեռացված բնութագրումները ինչ-որ մի տեղ նույնանում էին, քանի որ թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքերում Դանեմարքու մասին դատում էին նրա կատարած գործողություններով, ավելի ճիշտ, գործելու նրա ընդունակությամբ: Ըստ որում աշքից բաց էր թողնվում այն, որ ամեն գործողություն անպայման դեռ բարիք չէ, ոչ էլ գործունեություն: Եվ նույնիսկ, եթե մարդուն գնահատես ենինով նրա լոկ գործելու բնդունակությունից (ինչը ինքնին դեռ ոչինչ չի բնորոշում), ապա վերսահին չի կարելի հաշվի շառնել, թե ինչպիսին է այն գործողությունը, որ պիտի կատարի կամ չի կատարում Համլետը: Պարզվում է, որ թե՛ որա պատասխանը, թե՛ այլևայլ պատասխաններ միայն Համլետին դիտելով չեն գտնի, ինչպես ընդհանրապես անհնար է դատել այս կամ այն անհատի մասին՝ նրան լոկ զննելով: Անհրաժեշտ է շուրջը նայել:

Քեմական ավանդույթը սովորաբար անտարբեր է նայել Համլետի շրջապատին, Դանեմարքու վեհության համեմատ նրան չնշին ու ողորմելի են թվացել կալվիոսն ու ողջ էլսինորը: Վերնագրի շակերտներն իսկ ավելորդություն են համարվել՝ Համլետ, այսինքն հենց ինքը հերոսը

ու պրծավ զնաց Մնացյալը ֆոն է և ուրիշ սշինչ: «Համլետը» մոնողրամաէ, «Համլետը» պատմոթյունն է մի մարդու մասին, թառերգությունն մի դերասանի համար Եվ «Համլետը» կարծիս միակ ողբերգությունն է, որ տեղ է զաել ժամանակակից ասմանը բոլորի սեպերտուարում:

Բայց ահա Գ. Կողինցի ստեղծած ֆիլմում մենք տեսանք նախ և առաջ ոչ թե Համլետ-Սմոլտունովկուն, այլ նրան շրջապատող աշխարհը՝ Էլսինորի Այս, Էլսինորն այդ ֆիլմում ասացին պլանն է բերվել Համլետին տեսնելու, նրա գեղը զննելու համար հարկ է, որ թագավորի պարագաններն ու հյուրերը մի կողմ քաշվեն: Նկարահանող կամերան, իհարկե, ամենատես է և բնուածակ տպածդ պահին կենարոնանալ հերոսի վրա: Բայց ոեմիսյորը չի շտապում անել այս էլսինորով Համլետին բատվերը հենց սկզբնակենան է այն մեկնարանության, որ ֆիլմում պետք է ամբողջանաւ: Եվ ամենայն հետեւականությամբ, չնայած ինքը՝ Գ. Կողինցի ավանդական մեկնարանությունների սիրահար չէ: Ավելի շուտ՝ շնորհիվ այդ ներհակության: Համլետի առեղծվածքը հերոսի բնության և հոգերանության մեջ չսպիտի փնտրել, — ուզում է ասել ոեմիսյորը, — այդ այդ անհատին իր ժամանակի, Էլսինորի անոթի մեջ տեղադրելով:

Հատկանշական է Գ. Կողինցիի արտահայտած հետեւյալ միտքը, որ լիազես ժխտում է «Համլետի» ավանդական ընկալումը: «Համլետը միայնակ է: Եվ ահա ցուցագրում են նրա այդ մենակությունը սրահների զատարկությամբ, անմարդաբնակ այն վայրերով, ուր մեմում է միայն նա ինքը: Բայց ողբերգականն այդ չէ, ամբոխի մեջ միայնակ լինելն է... Ահա թե ինչու ևս փորձում եմ վերաբարեկ նրա առաջին մենախոսությունը պալատականների թոհուրուում, արքունական հանդիսի աղմուկի մեջ»<sup>2</sup>:

Եվ Գ. Կողինցին իր ֆիլմում կերպում է Էլսինորի շինությունը՝ բառիս րուն իմաստով: Կինևմատառզրաֆը վիթխարի հնարավորություններ է ընձեռում գործողության վայրի պլաստիկ վնրարտադրման համար: Լուրենս Օլիվյեի ֆիլմում ևս Էլսինորը մասշտարներ ու ընդգրկում էր ստացել, ի ցուց զնելով ամրոցի այն լարիքինթոսները, ուր մարդը կարող է հեշտությամբ մոլորվել: Համլետը այդ ծուղակից դուրս պրնել չկարողացավ: Ուրիշ խոսքով քանքարավոր Համլետ-Օլիվյեն չկարողացավ գլուխ հանել պալատական գավաղրության ցանցերից:

Գ. Կողինցի ֆիլմում այդպես չէ: Էլսինորի պատկերացին ոչ մի հանգամանք ոեմիսյորը սիմվոլի չի վերածում և չի դարձնում ողբերգության իմաստը խորհրդանշող պարագա: Ամրոցը սոսկ ամրոց է, շատ բնորոշ միջնադարի համար, աշտարակները աշտարակներ են և նույնիսկ շղթա-

ները, ինչքան էլ շատ են դրանք, բնավլ պատկերավոր չեն դարձնում Համլետի հայտնի ասուլիքը, թե սԴանիան բանտ էս: Ճիշտ այնպես, ինչպես որևէ իմաստավորում չի պարունակում կադրերի մոռալ ու գորշ գունայնությունը: Պարզապես հյուսիսի արևն է այդպես աղոտ և անուրախ...

Առանց գոյները խտացնելու, բայց հետևողականորեն ոեժիսյորը կուտակում և ամբողջական է դարձնում էլսինորի հարգկու հարմոնիան լրացնող պատկերային մանրամասները: Ոչ թե առանձին դիտվող և ինքնարավ, այլ միմյանցով պայմանավորված, ինտերյերը կենցաղին ու անցուդարձին, բարքերին ու մտածելակերպին համագրող այն միասնությամբ, որ գումար է ժամանակը, վայրը՝ էլսինոր:

Էլսինորն է այն ամենը, ինչ գոյություն ունի Համլետից գուրս և ծառանում է նրա դեմ: Էկրանի վրա նա ապրում է իր կյանքով, շնչում՝ իր շնչով, մարդաշատ է ու հորդուն: Ու մի հետք այն սակավապետությունից որը հատուկ էր «Համլետի» ավանդական բնեմադրություններին, երբ բեմահարթակն ամեն ինչից ազատվում ու տրվում էր լոկ մենակատար պրեմյերին:

Կողինցկան էլսինորն, ընդհակառակը, երբեմն ծայրեծայր լցվում ու կարծես սկսում է զուրս թափվել իր դարաշրջանի անոթից:

Ահա, օրինակ, զինվորների, թիկնապահների, սպասավորների բազմությունը: Նրանք ցրված են ամբողջ պալատով մեկ և մրցլունների պես գեսուդեն են վաղում: Նրանց ամեն անկյունում էլ հանդիպում ես, գործողության ողջ ընթացքում: Խոսքի և դրամատիկական ֆունկցիայի բացակայությունը նրանց մոտ անսպասելի իմաստավորում է ստանում և մի պահ թվում է, թե նրանք ոչ թե էլսինորի ու միջնադարի, այլ նորագույն ժամանակների ուրվականներ են, ֆաշիզմի, ռազմամոլության և առհասարակ տոտալիտար քաղաքական սիստեմների և ավտորիտար իշխանությունների մշտական ու լուակյաց ուղեկիցները: Ուրիշ խոսքով, մենք ասես գործ ենք ունենում քսաններորդ դար ներխուժած Շեքսպիրի հետ:

Կողինցկան այդ պատկերաշարը ծնվել է ողբերգության սկզբում, գործող անձերից մեկի դրեթե պատահական մի ոեպլիկից՝ «Ինչո՞ւ է ամրոցի պահպանությունն այսքան խիստ»: Շեքսպիրի մոտ այդ ոեպլիկը որոշակի իմաստ է կրում՝ Կլավդիոսին մտահոգողը Դանիայի հանդեպ զորավար Ֆորտինբրասի ցուցաբերած ակնկալություններն են: Ֆիլմում դրա իմաստն ավելի խորն է գնում՝ հենց այդ խիստ պահպանության մեջ է էլսինորի գոյության և բարզավաճման պայմանը: Կողինցկը ոչ թե

սոսկ ուշագիր է ողբերգության այս կամ այն փութանցիկ ռեպլիկի և մանրամասնի հանդեպ, այլ համոզված, որ Շեքսպիրը կահճել է էլսինորի բոլոր գաղանիքներն ու մղումները և մնում է գտնել գրանց պլաստիկ արտահայտությունը:

Կամ առաջ ֆիլմի պատկերային մի այլ մոտիվ՝ ինտերյերի (պալատի) առաւ զարդարվածությունը կլավիուսի դիմանկարներով ու կիսանդրիներով։ Ենշար դրված է և բնդդված իրքեւ սուր մի բազգատում մեր ժամանակների, մասսայական «պաշտամունքների» հաշակով լիքազարերթության հետ եվ ի՞նչ. նույնիսկ այդ մոտիվն էլ ուժիուորը ողբերգության աերստից է բազեր ի աարերթություն Շեքսպիրի բազում ուրիշ մեկնարանների, Գ. Կողինցիք աննկատ չի թողել Համլետի նետած հետեւալ խոսքը. «Հորեղբայրս այժմ Գանիայի թագավորն է և բոլոր նրանք, ովքեր հորս կենդանաւթյան օրոր հավակի էին նկատում և խոսում հետք, հիմա քան, քառասուն, հիսուն ու հարյուր գուկատ են վճարում նրա շնչին պատկերի համար։ Գրողը տանի, այստեղ գերբնական ինչ-որ բան կա, եթե միայն փիլիսոփայությունը կարողանա գտնել դրա արմատը»:

«Գանիան բանտ է» համլետյան բնորոշմանը Գ. Կողինցիքը տեսանելի կոնկրետություն է պարզեւում։ Այդ բնորոշումն է բնիկած զրեթե յուրաքանչյուր կազմի և իրավիճակի հիմքում։ Նոյն իմաստով հատկանշական է Օֆելիայի կերպարի ու թևմայի կողինցիկան մշակումը։

Օֆելիա-Վերտինսկայան անպաշտպան մի կղզյակ է էլսինորում։ Էլսինորը սարգի պես իր սուտայնն է Ներբաշուր աղջկա անմեղ հոգին, ընկրողմելով այն զավերի ու մատնությունների հորձանուտը։ Ֆիլմում ստույդիարարադրվում են Կլավիուսի և Պոլոնիուսի մեթոդիկ ջանքերը Օֆելիային իրենց ձեռնածուն զարձնելու։ Համլետի հետ հանդիպելիս Օֆելիա-Վերտինսկայան լուսնութիւնը է շարժվում, ասես ամբողջովին հապալակված լինի դրսի ինչ-որ ուժերի, էլսինորի իշխանությանը։

«Թակարգի» տեսարանում դժվար է ճանաչել ավանդական Օֆելիային։ Էլսինորը նրան տեսրով էլ վերամշակել, դուսպ ու անտարեր զարմիկ գեղեցկունու կերպարանը է ավել։ Ամեն առավոտ սպասուհիները նրան պարզապես ոչ թե հազցնում, այլ խոթում են երկաթե սեղմիրանի մեջ։

Երկաթը էլսինորի խորհրդանշանն է։ Բայց երկաթն այս դեպքում պետք է եկել ուժիուորին Համլետի վրայից նրբանկատորեն Օֆելիայի խելազարության մեղքը հանելու համար։ Երկաթն ավելի, քան հոր մա-

Հը նախորոշում են Օֆելիայի կործանումը: Նրա հոգու և մարմնի արո-  
հումը վաղուց էր սկսվել: Մարմինը մնացել էր երկաթի ձիրաններում,  
հոգին ազատ արձակվել:

Եվ առաջին անգամ հենց խելագարության տեսարանում է Օֆելիան  
ներկայանում իրեւ մի անհատ, որ աղատ է էլսինորի տիրակալությու-  
նից ու ենթակա միայն իր խղճին: Ցնորքի մեջ աղջիկը դունում է ինքն  
իրեն, դառնում այնպիսին, ինչպիսին բնականում պիտի լիներ: Կողինցեւ  
էլրանի վրա ծավալում է մի ամբողջ դիվերտիսմենտ, խելագարության  
միջոցով Օֆելիայի ինքնարտահայտման ողբերգական դիվերտիսմենտը:  
Կամերան դիտարկում է: Օֆելիան ահա կորագծի մեջ է: Մյուսներից նո-  
րաժամկան մի որոշ տարածությամբ: Պալատականները նրան շրջա-  
փակել, բայց մերձենալ չեն կարողանում: Նա դուրս է պրծել էլսինորի  
ճանկերից: Թագավորը, թագուհին, նույնիսկ նրա եղբայր կաերտն ասես  
հանդիսատեսներ են, ողբերգական այդ տեսարանի ականատեսները:  
Էլսինորն այլևս անզոր է իշխել Օֆելիայի վրա: Հոգով նա ազատ է:

Էլսինորի թեմայի մշակման մեջ աշքի է զարնում շատ կարևոր մի  
նկատառում, այն երբեք չի փոխում իր հակամարդկային էությունը, բայց  
դա մեկը դմիշտ սահմանված ու անշարժ գոյածն չէ: Էլսինորը շարժում  
է, ձկում:

Շեքսպիրից է քաղել Գ. Կողինցեւ Կլավդիոսի ժամանակակից ժամանակակից մշակման մեջ աշքի է զարնում շատ կարևոր մի  
նկատառում: Այն երբեք չի փոխում իր հակամարդկային էությունը, բայց  
պատճառով՝ Ֆիլմում Կլավդիոս-Նազվանովի դեմքին ժամանակակից մի ամ-  
բողջ շարք է ցուցադրվում: Դա միաժամանակ իշխանությանը տիրած  
ինքնագոհ մարդու ժամանակակից է: Դա ժամանակ է և հեշտասեր մեկի, որ տիրա-  
շել է թագուհի կնոջը: Սակայն գերազանցապես դա ժամանակակից է, ժամանակակից է:  
Ժամանակակից է գրչապատին և թաքցնում է ներքին սուր տագ-  
նապը: Ինչպես ասում են՝ «Լավ դեմք, վատ խաղի պահին»: Ժամանակակից է ժամանակակից մեջ աշխարհին: Այդ ժամանակը մի զենք է կլավդիոսի ձեռ-  
քին: «Թագարդի» տեսարանի ոեթիսլորական հետեւյալ գյուտը հիացմունք  
է պատճառել Շեքսպիրի այսօրվա ամենաականավոր մեկնաբաններից  
մեկին՝ Պոլ Սկոֆիլդին: Պանտոմիմային ներկայացման բարձրակետում  
կլավդիոս-Նազվանովը հանկարծ տեղից վեր է թոշում և հազիվ զայրու-  
թը զսպելով, սկսում է ծափ տալ: Դերասաններին է ծափահարում: Ճիշտ  
է, դա միայն մի ակնթարթ է տեսում և հաջորդ վայրկանին Կլավդիոսն,  
ինչպես արդեն Շեքսպիրն է պահանջում, դուրս է վազում հանդիսարա-

հից, Բայց միևնույն է, «Թակարդի» ներքին լարվածքը փոխվում է Կլավդիոսն ընդունակութ է Հարմարվել ամեն ինչին, անդամ իր անպատճությանը:

Մինչդեռ Համլետը նրան հարվածել էր ուզում բացեիրաց, առանց տողատակում թաքնվելու իսկ Կլավդիոսը կարողանում է գլուխը թեքելով խույս տալ այդ սպղակի հարվածից: Եվ ներառ նրան չի կազում: Թաղավորի ծափը թույլ էր ու սղորդ, բայց էլումորը կարևորություն է տալիս միայն արտաքին էթիկեափ պահպանմանը: Մի քանի ծափը բավական էր, որպեսզի ոչ սր գուգացեն շանցկացնի ներկայացման պատմածի և Կլավդիոսի թագաղըման եղանակի միջև էլումորը գորկ է վերլուծելու, համեմատելու և ընդհանրացնելու ունակությանից: Կլավդիոսը զիտե այդ և վստա՞՛ է, որ իր ծափերից հետո կարող է փախուստ տալ ներկայացումից, միանգամայն զերծ լինելով մերկացման վտանգից:

Ինչ վերաբերում է Համլետին, ապա նա, բայց էության, արդեն մինչ ներկայացումն էր կուհել Կլավդիոսին: Ֆիլմի վրա աշխատելիս, Գ. Կողինցին իրավամբ նախազգուշացրել է ի. Սմոկատնովսկուն, որ «Փանանակակից գիտասրահներում հաղիվ թե գանվի այնպիսի մեկը, որին հետաքրքի՝ ուրվականը ճիշշատ է ասել, թե ուստի Ալյագիսի հարցարկ պիեսում իրոք որ կա, բայց դա նրա հնացած, կենսազորկ շերտերից էաւ<sup>3</sup>:

Նշանակում է «Թակարդի» տեսարանում Համլետը ձգտում էր ոչ թե ստուգել իր գիտցածքը, այլ հարապարակալ ներկայացնել Կլավդիոսին: Եվ հենց այդ է, որ շտացվեց: Կլավդիոսն ինքը բացահայտեց Համլետին, կուհեց նրա միտքը Ահա թե ինչին հանցեց Համլետի կոնկրետ գործողությունը՝ նա տակտիկական հաղթանակ տարավ, բայց ստրատեգիական պարտություն կրեց, մենամարտը շահեց, իսկ ճակատամարտը տանուկ տվեց: Կլավդիոսն ավելի հմուտ ախոյան դուրս եկավ: Նա հայելու մեջ ինքն իրեն տեսնելով, դորժադրեց իր զենքը՝ ժպտաց, ծափահարեց ու անխոցելի մնաց:

Ահա թե ինչու մենք շենք կարող համաձայնել քննադատ Ե. Գորինի հետ, որ գտնում է, թե Համլետ—Կլավդիոս հակամարտության սկիզբը առաջինի կողմից հիանալիորեն ծրագրվել և հաջող է իրագործվում: Ընդհակառակը, էլսինորը, կուհելով իր երդվալ թշնամուն, «Համլենդանուր մորիլիզացման» է դիմում, հավաքում է իր ուժերը և բռունցքը պարզում: Ամրոցի պահպանությունն ավելի է խստանում: Համլետն այսուհետև ամենն բայցափոխին դեմ է առնում ժամապահներին: Համլետ Սմոկատնովսկին կարող է, իհարկե, ծաղրել նրանց, սարկաստիկ նետեր արձակել: Բայց հարվածի թիրախը գնալով աղոտանում է: Մոր ննջա-

րանում նրա սուրբ խոցում է ոչ նրան, ում փնտրում էր էլսինորն ամենատարած է, ուստի և անորսալի: Մթնոլորտը գնալով ավելի ծանր ու անտանելի է դառնում: Համշետի գլխին ամպեր են կուտակվում:

Ժամանակին քննադատները խարազանում էին «Համլետի» օխլոպկովյան բեմադրությունը. էլսինորի թեմայի պլաստիկ փոխարերական լուծման համար: Նրանք գտնում էին, որ «Թանիան բանտ է» մոտիվի գեկորատիվ տրվածությունը կողոպտում է Համլետի միտքը՝ այդ եղանակման աստիճանական գոյացումը: Օխլոպկովյան Համլետն ըստ էության հավաստում էր այն, ինչն արգեն ակնհայտ էր յուրաքանչյուր դիտողի համար:

Մինչեւ կողինցևան մեկնաբանության բարձրությունից պարզ է դառնում, որ Օխլոպկովի բեմադրության սխալն այլ բանի մեջ էր: «Թանիան բանտ է» եղանակումն, իհարկե, Համլետին է պատկանում: Բայց նրան հուզող հարցը ամենակին էլ այդ երևույթի բացահայտումը չէ: Շեքսպիրը դրանով շի բացատրում իր հերոսի տառապանքը. Համլետը մտահոգված է այն բանով, որ մարդիկ համակերպված են ու հոժար այն բանտին, որ կոչվում է էլսինոր: Այս մտահոգությունն է փոխանցվում և մեզ՝ «Համլետի» այսօրվա հանդիսատեսներիս:

Օխլոպկովը դիմել էր վերացական սիմվոլացմանը, գրոտեսկային շափազանցմանը: Նրա պատկերած «բանտին» գժվար թե կարելի լիներ համակերպվել ու սովորել: Աշքից բաց էր թողնվել ուեան ու առօրեականը: Մինչդեռ կողինցևի վերաբանությամբ էլսինորն աշքի ընկնում իր առօրեականությամբ ու սովորականությամբ: Դրանումն է նրա ուժը, կայունությունը: Էլսինորը սարսափ ազդող մի հրեշ չէ: Բնդհակառակը, էլսինորը գիտե և ժպտալ, և ծափահարել, նույնիսկ հարմարվել ինչ-ինչ նորությերի:

Գ. Կողինցևն առհասարակ շի էլ քննում այն հարցը, թե ինչպես է Համլետը կարողացել ըմբռնել էլսինորի բուն էությունը, նրա Համլետի մոտ դա ինքնըստինքյան է հասկացվում ու հաստատվում: Կարելի է ասել, որ Սմոկտունովսկու հերոսի մեջ ամփոփվում է պատկերացումների այն ողջ կոմպլեքսը, որ ստեղծվել է Համլետի մասին երեք հարյուրամյակի ընթացքում: Այն Համլետին, որին մենք տեսնում ենք Սմոկտունովսկու մոտ, գործողության սկզբներին, սովոր ենք, ճիշտն ասած, տեսած լինել ողբերգության միջնամասերում: Համլետ-Սմոկտունովսկին գրեթե շի ուսումնասիրում իր շրջապատը, չի զննում պալատականներին, կլավդիոսին, ոչ էլ նույնիսկ մորը: Նրա բանականության համար էլսինորին հաս-

կանալը դժվար բան էլ չեւ Առաջին կադրերում, նա ասեն մատահոգված է լոկ իր հոգեկան անձնունմխելիսթյունը պահպանելու, էլսինորի հետ շրփման մեջ շմաներու ցանկաթյամբ ո՞՛Փատարկ աթոռի» դրվագի իմաստն էլ հենց այդ է. Կրավդիտոր դիմում է իր եղրորսրգուն, իսկ արքայազնը չի արձագանքում, պարզապես չքանում է ամբոխի մեջ:

Համլետի իմացաթյան աղյուսակը զեսես չի գերանում սոսկ հայեցողական շրջանակներից («կողիներիդ ներքաններն իսկ մաշել շնասցրիր», — թախուա ասում է նա մորք, ակնարկելով նրա փոթիս հարմարումը նոր իրազրությանը): Բայց, բատ էության, Համլետը զես րեմ չի ելել, միհնույն է ասել, թե մարդկային պատմության բնմահարթակը Ակնհայտ է լոկ Համլետի ներքին խորթությունը իր շրջապատի նկատմամբ, ամբոխի մեջ գանվողի միայնակությունը: Դրանում, սակայն, ողբերգական գես ոչինչ չկա: Կա լոկ զրամա, «ավելորդ մարդու հոդելին: Ողբերգությունը հետո է սկսվում, երբ «խորթ անհատը պատասխան պիտի տա «ժամանակի» իր շավզից գուրս սալթաքելու համար:

Եվ ահա Համլետի հոգու տառապագին ցնցումները բանակականից որպականի ևն վերածվում և ողբերգություն հարուցում հոր ուրվականի հետ հանդիպման տեսարանում:

Այդ տեսարանը կարծես շատ բան էլ չի ասում Համլետին, չէ՞ որ իրերի գրությանը նա մինչ այդ էլ տեղյակ էր, էլսինորն ըմբռնած, հոր մահը վերապրած: Ուրվականը լոկ հաստառում է Համլետի կուհումները, բայց ինչո՞ւ է նա հոգեկան այդպիսի ցնցում ունենում:

Առաջին անգամ ֆիլմում, հենց այդ դրվագում է, որ Համլետ-Մոլոկունովսկուն մենք ընկենած ենք տեսնում: Նա ընկենած է ո՛չ այնքան հանցագործության մասին իմանալու, որքան «սալթաքած ժամանակին» իր կապված լինելը զգալու պատճառով: Ուրվականը նրա խղճի ձայնի արձագանքն է և կոչում է իրեն զործի անցնելու: Գա այն պահանջն է, որ խիզը ներկայացնում է մտքին:

Ի. Մոնկառունովսկին այդ տեսարանում շատ տպալորիէ: Անասելի ծանր բեռան տակ Համլետը ձկվում է, ինչպես ջարդված մի ճյուղ... Տանջանար պատանին փոված է ծովափիին: Մարդը զեմ առ զեմ զարնվում է մի պրոբլեմի, որը ոչ կարող է լուծել, ոչ անտեսել:

Ողբերգության այս հատվածը միշտ էլ դժվար է եղել հստակորեն մեկնարանել: Ինչո՞ւ հոր մահվան վրեժն առնելու խնդիրը Համլետն ընկալում է իրեր մի համաշխարհային-պատմական խորհուրդ: Դրա պատասխանը ֆիլմում տրված է միանդամայն պարզ ու մեկին, ամեն ինչ

բացատրվում է Համլետի այն գիտակցությամբ, որ Կլավդիոսին սպանել կարելի է, իսկ հաղթել՝ ոչ: Որովհետև գոյություն ունի էլումորը: Հենց նա է, որ հավերժացնում է ժամանակների խզումը և Կլավդիոսի արարքին սովորականի իմաստ պարզեւում: Ահա թե որտեղ է վճռող դաշնում Համլետի՝ նախապես էլսինրին ճանաչելը: Այլ կերպ, եթե ճշմարտությունը նրա համար բացվեր ուրվականի հետ հանդիպելուց հետո միայն, ապա ամեն մի հապաղում կարող էր խոսել սոսկ կամքի թուլության, գործելու անընդունակության մասին:

Բանը, սակայն, կամքի բացակայությունը չէ, այլ լիակատար իմացությունը թե մարդու իսկական կոչման, թե այդ կոչման անիրազործելիության: Հերոսները, որ պատրաստ են անվարան նետվել կրակի ու ջրի մեջ, մի ակնթարթ նախազգալով իրենց սիրանքի անպառուղ ու անիմաստ լինելը, նույնպես կընկճվեին: Առավել հս Համլետը, որի մոտ միշտ եւ խփում է արթուն գիտակցության զարկերակը:

Էլսինորն ինքնին ոչնչություն է, սակայն հեշտ չէ գտնել նրան արմատախիլ անելու միջոցը. Կլավդիոսը մանր ու զարշելի չարիք է, կարդիլ է ասել, քաղցկեղի մի ուսուցք մարդկության մարմնի վրա: Բայց վիրահատման ճանապարհով այդ ուսուցքը չես բուժի: Դա հաստատվում է հենց «թակարդի» տեսարանում:

Գ. Կողինցեկի մեկնարանության բարձրակետը, անտարակույս, «սրբինդի» տեսարանն է: Այստեղ իր առավելագույն արտահայտությանն է համուում «Համլետի» փիլիսոփայական միտքը՝ հերոսի ծայրաստիճան անհաշտվողականությունը մարդկային «Փնտնության» ստորացման հանդեպ, անհատի անկախության և անկրկնելիության իրավունքի նրա կատաղի պաշտպանությունը: Գուցե հենց այստեղ է, որ Շեքսպիրն ամենից ավելի է մերձենում մեր արդիականությանը: Եվ Կողինցեկը կենտրոն է քաշում Համլետ-Սմոկտունովսկուն: Հերոսը դիմում է ոչ այնքան Ռողենկրանցին ու Գիլենշտերնին, որքան մեղ՝ սրահում նստած հանդիսատեսին: Կազմի խորքերից ուղղակի դեպի մեղ էլ քայլում է: Խոսելիս նա առաջին ու թերեւա, վերջին անգամ նայում է մեղ, տաք-տաք պաշտպանում իր տեսակետը, ալելի ճիշտ՝ յուրաքանչյուր անհատի իրավունքները և զգուշացնում է... Համլետի բուն զենքը միտքն է: Եվ այդ զենքը նա վարպետորեն է գործադրում:

Քննադատներից ումանք այս տեսարանը չգիտես ինչու հակադրում են ողբերգության մյուս դրվագներին: Եվ, մասնավորապես, «կինել թե մինել» նշանավոր մենախոսությանը:

Մի՞թե այդ մենախոսությունը, որ հաճախ չի հաղթահարվում նույնիսկ խոշորագույն արտիստների կողմից, Կողինցի աշքում անցողիկ պահ է թվում, որի վրա շարժե կենարոնացնել հանդիսատեսի ուշազրաթյունը:

Յափոր, ֆիլմում այգանու էլ սաացվել է: «Համլետի» ավանդական կոնցեպցիաներից խորշող սեմիսյորը, այդ ահսարանը մեկնարանելիս, առորք է ավել ռումեղ Համլետի» մեկնակետին Պետք է սակայն, ավելացնել, որ նույնիսկ այդ խնդիրը ավլյալ գրվագում նա չի կարողացել լուծել հարկ եղած պատկերավորաթյանը ու համոզականությամբ: Բառ երևոյթին, այստեղ գեր են խաղացել նուև կիմոյում «ներքին մենախոսության» վերարտադրման գեղարվեստական ու ահսնիկական բարզությունները: Գ. Կողինցիք «արտակազրային» է դարձել Համլետի մենախոսությունները, այսինքն՝ երբ գերասանը կադրի մեջ լսում է ու մտածում, իսկ ձայնը մեզ լսելի է: Այս մեթոդը ընդհանուր առմամբ մերժելի չէ, սակայն դա բնավլ էլ հիմքը չի տալիս հավաստելու, ինչպես դա անում է քննազատ Ե. Գորինը, թե Շեքսպիրի մենախոսությունների համար բհմի շրջանակները միշտ էլ նեզ են եղել և հենց կինեմատոգրաֆն է, որ դրանց աղատադրեց: «Արտակազրային ձայնը» հերսոփ խոհերին իրոք որ խոհերի բնույթ է տալիս:

Հարցն այնքան դյուրին չէ, որքան կարող է թվական հայցքից: Քանի գեր խոսք ենք ունենաւմ առանձին ներքին ուսուլիկների, սուր ու ցայտուն դիառղությունների ու հերսոփ մարի ակնթարթացին այլևալ տոկայծումների հետ «արտակազրային ձայնը» գիլմում իրոք որ նպաստավոր գեր է կատարում: Բայց երբ ուներքին մենախոսությունը դրամատուրգիական ավելի կարևոր դործոն է դառնում, երբ Համլետը միայնակ է և նրա մարզում ոչ թե առանձին ուսուլիկներ են ծնվում, այլ վեճ է բորբոքվում, ինչպես, օրինակ, «կինել, թե լինել» մենախոսության ընթացքում, Շեքսպիրն էկրանի վրա սկսում է խամրել:

Այստեղ համատագրական գեր է խաղում խոսրի համեմատությամբ կինոյում պատկերացնի զերիշխանությունը:

Համլետ-Մոլկատունովսկին մենախոսության ընթացքում մեջքով դեպի հանդիսատեսն է: Հասկանալի է, որ սեմիսյորը ցանկացել է գործողությունը լոկ խոսքին ապավինել, որպեսզի մենախոսությունն ավելի լսելի դառնա: Բայց ցավն էլ այն է, որ պատկերացին կողմի փոխարեն էկրանից չբանում է ինքը՝ հերսոր: Վեր խոյացող ձայռարեկորի ստատիկ պլանը ճնշում է թե՛ կադրի և թե՛ խոսքի վրա: Մենախոսությունը գրկվում է հոգեբանական իր կոնկրետությունից, որովհետև չկա մենա-

խոսողի ոչ գեմքը, ոչ աշքերը: Անդամ թատրոնում, ուր խոսքի իշխանությունն ավելի մեծ է, ոչ ոք չէր խիզախի տվյալ մենախոսության պահին գերասանին մեջքով դեպի հանդիսատեսը դարձնել կամ բեմից հեռացնել:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է ոչ թե ֆիլմի սույն դրվագի անհաջող լուծումը, այլ այն տեղն ու նշանակությունը, որ տրված պիտի իիներ այդ տեսարանին Գ. Կողինցեկի ֆիլմում, եթե ոեժիսյորը հետևողականորեն ժառայեցներ դա իր ընդհանուր մտահղացմանը:

«Լինել, թե վինել» մենախոսությունը սովորաբար ընկալվում է իրու մտորում ինքնասպանության մասին. «Թույլ Համլետի» ջատագովները այդ տեսարանում ամբողջովին մղվում էին անհույս թախծի դիրկը և արտասուրքի մեջ մարում Դանեմարքու մտքի կրակները: Նույնիսկ «ուժեղ Համլետ» փափառողներին «Լինել, թե վինելը» նույնպես ինքնասպանության մտորում էր թվում: Ճիշտ է, այդ առթիվ նշվում է, որ «հոգով արի մարդը գահավիժելիս անդամ բարձր է ըմբռստացող թույլից» (Վ. Բելինսկի):

Բայց այսպես, թե այնպես «Լինել, թե վինել» խոհը համարվում էր Համլետի թույլելիքան պահը, որ անհրաժեշտ է ընդդեմ կամ շրջանցնել, նայած ով ինչն է գերադասում: Յավալի է, որ 1964 թվականին էլ ոեժիսյորն ու դերասանը փորձել են առանց որևէ ճիգի անցնել այդ պահի կողքով: Յավալի է, մանավանդ այն պատճառով, որ «Համլետի» կողինցելան ըմբռնման ընդհանուր շղթայում այդ տեսարանը կարող էր, մեր կարծիքով, թեմայի զարգացման էական օդակներից մեկը դառնալ:

Թանն այն է, որ «Լինել, թե վինել» մենախոսությունը ոչ մի առջև-շուրջյուն չունի ինքնասպանության գաղափարի հետ:

Համլետը մտորում է իրեն քաջ ծանոթ աշխարհում՝ էլսինորում, գոյության այն միջոցների մասին, որ հանգում են երկու սկզբունքի՝ հաշտվել կամ դիմադրել: Համլետը վերլուծող միտք ունի և քննում է մարդկացին անվճականության, մասնավորապես, հարմարվողականության բուն շարժառիթները: Ի դեպ, այդ անելիս նա իրեն էլ չի խնայում:

Առաջ նա միայն կուահում էր էլսինորի ընությունը: Այս մենախոսության ընթացքում նա արդեն երեսութիւ արմատներն է զննում: «Լինել, թե վինելում» հստակորեն լսելի է ոչ թե պարզապես «դարն ուղղելու», այլ նաև հենց ինքն իրեն ուղղելու կոչը: Ահա թե ինչումն է բանը:

Մենախոսությունն անսպասելիորեն վկայում է Համլետի ոչ թե ընկրած-վածությունն ու թուլությունը, նույնիսկ ոչ էլ նրա հասպազումը, այլ ողոքամբությունը:

Գ. Կովկանցեր, որ հակված է Համլետի ուժը նրա մտքի մեջ տես-նելու, ձևորից բաց է թողել այդ տեսարանի ընձեռած հնարավորությունը, ցուց տալու համար, որ տվյալ գենքը նա դործադրում էր նույնիսկ ինքն իր դեմ՝ Թատերգության կոնտեքստում այդ մենախոսությունը կարեւոր գործոն է հանդիսանում Համլետի դիլեման լուսաբանելու համար։ Զոյսունանը, որ «Էլինել, թե շինել» մենախոսությունը տեղադրված է դիրասանների ամրոց ժամանելու և «թակարդի» տեսարանի միջև։

Համլետի դիմում ծագում է Կրավդիսուից վրեժ առնելու որոշակի մի ծրագիր։ Եվ նա խնդրում է դիրասաններին խաղալ «Գոնդարոյի սպանության» տեսարանը։ Իսկ մենակ մնալով, նա ցավով ընդդժում է, թե «որքան ավելի ձգձիս անելիքդ, այնքան, ավելի մղումներ կլործանվեն, և վիթխարի մղումներ...»։ Բայց, արգոյն՝, այդ «վիթխարի մղումները» կապ ունեն «թակարդի» ծրագրի հետ։ Չե՞ որ Համլետը մտադիր էլ չէ ձգձիս վրեժ առնելու իր մղումը։ Առայժմ ամեն բան ընթանում է իր ուղածի պես։ Ոչ, «թակարդի» ծրագրը «վիթխարի մղումն» հետ կապվել չի կարող։

Մեկնարանները նշում են, որ Համլետի այդ խոսքերը վկայում են Վիտենբերգի համալսարանի նախկին ուսանողի տեղյակ լինելը աշխարհի բարեփոխման այն ծրագրերին, որ հղանում էին այդ գարաշրջանի ականավորագույն մատածողները։ Բայց եթե նա տեղյակ է դրանց, ապա պողիտիվ ի՞նչ ծրագրերի ջատագով է ինքը։ Համլետը դործուն մարդ է։ Նա ընդունակ է գրաւորել իր թե՛ վճռականությունը, թե՛ խիզախությունը։ Ավելին՝ հնարամատությունը։ Բայց հաղիկ թե նա իր համար մշակած լիներ հասարակական որևէ պողիտիվ ծրագրի։ Չե՞ որ «թակարդի» տեսարանից հետո բայցայիտում է նրա նույնիսկ վրիժառության կոնկրետ ծրագրը, որ մինչ այդ էլ չէր բավարարում իրեն, բարոյա-փիլիսոփայական իր մտածելակերպին։

Իսկ եթե, ընդհակառակը, մտածենք, որ «թակարդից» հետո Համլետի զենքն ավելի է սրվում, ծրագրը հստականում և նա անցնում է արդեն ակտիվ հարձակման, ինչպես դա թվում է ֆիլմը գրախոսողներից ուժանց, օրինակ, նույն ե. Դոբինին։ Այդ դեպքում հակասություններն ավելի կխորանան։ Մի՛թե Համլետի ծրագրի մեջ էր մտնում նաև Պոլո-

Նիստի սպանությունն ու Անգլիա ճանապարհվելը: Եթե Համլետը հետամոռ է Կլավդիոսից վրեժ առնելու իր նախկին մտադրությանը, ապա ինչու՞ է հապաղում և զուր տեղն ուժերը վատնում:

Ճիշտ չէ՞ր լինի, արդյոք, ասել, որ իր իսկ մշակած ծրագրի հենց անորոշությունից է Համլետն այսպես թե այնպես հանձնվում դեպքերի ինքնահոսին:

Բայց ինչու՞ Համլետի սուր ու խորատես միտքն անկարող է լինում հզանալ ու առաջ քաշել որոշակի մի ծրագրի, ինչու՞ կյանքի այն խոր իմացությունը, որով նա թափանցել էր էլսինորի գաղտնարանները. չէր ստեղծում նույն էլսինորի տապալման ծրագիրը:

Համլետը մեկն է հանճարավոր այն անհատներից, որոնք ներկան դիտում ու գնահատում են ոչ թե ներկայի դիտանկյունից, այլ ուրիշ ժամանակների: Անցյալի, թե ապագայի՝ տվյալ դեպքում կարենոր չէ: Կարենոր այն է, որ Համլետի և էլսինորի փոխհարաբերությունները տարբեր մակարդակների հարաբերում է: Անգամ Հորացիոն է գտնում, որ Համլետի մոտեցումն ու հայացքը որոշ հանդամանքների նկատմամբ շափից ավելի խորազնին է: Այդ շափազնացն էլ հենց մատնում է մակարդակների անհամատեղելիությունը: Համլետը խախտում է էլսինուրում ընդունված ըմբռնումները: Եվ այդ պատճառով յուրաքանչյուր միտքը գատապարտված է մերժման ու անտեսման: Էլսինորը և մասնավորապես Կլավդիոսը որսում են, իհարկե, Համլետի մտքերի քայլքայիշ ուժն ու վտանգավորությունը: Բայց դրանց պոզիտիվ բովանդակությունը տվյալ դարաշրջանի ոլորտում ընկալվել չէր կարող: Այդ պայմաններում Համլետի հղացած ուղարձու ծրագրը տապալման էր ենթակա: Եվ հարցը ոչ թե անվճռականության կամ «Ճգճակման» մեջ է, այլ պատմական անհրաժեշտության: Եթե նույնիսկ որևէ կրթված միապետ ուզենար էլ, ասենք, իրականացնել Մոռըի «Ուտոպիան» կամ Կամպանելլայի «Արև», միենույն է, դեմ կառներ այդ ծրագրերի կիրառման օրյեկտիվ անհնարինությանը:

Այսպիսի եղրակացությունների Համլետը, բնականաբար, չի հանդում, նա հակված է ամեն ինչում մեղադրել իրեն, իր անվճռականությունը: Բայց միաժամանակ գիտակցում է «փակուղու», այսինքն՝ կիրառելի ծրագրի մշակելու անհնարինության հանգամանքը: Նա զգում է, որ իրեն բավարարող ծրագիրն ու գործելակերպը տվյալ իրականության մեջ անպատճէ են, անհեռանկար:

Հենց այստեղ էլ պիտի փնտրել նրա տառապանքի արմատները՝ «Ախնել, թե վինել» հարցադրման ողբերգական անլուծելիությունը Ողբերգական այն առումով, որ և պայքարելն անիմաստ է դասնում, և հաշտվելն անհնարի

Կլավդիոսից վրեժ առնելու ծրագրի վիրապնահատումն ու հաղթահարումը ֆիլմում Համլետի կերպարի զարգացման էական մոմենտներից է, Կոպինցեի մատեղացումը հետաքրքրական է Հենց այդ ծրագրի փոխարեն Համլետին ուրիշ մղումների արտահայտիչ և կրող զարձնելով: Համլետը անհատի իրավամբների պաշտպան,—ահա թե ինչն է «սրնիք» առուարանի պաթոսը և ինչու է նա հասուկ ուշադրության արձանացել ֆիլմի հեղինակների կողմից: Բայց էության, եթե կոնկրետ ծրագրերը հաջողությամբ պատկեր չեն խստանում, Համլետին մի բան է մնում, ուշքի գալ, սպասելու ժամանակի շահել... Գանել այն գաղափարը, որ ոհալ է, լիարժեք: Գուցի դրա համլետը էլ Համլետը գետ չէ Անգլիա ճանապարհվել, թեպետ նախազդում է Կլավդիոսի դավերը և միշտ էլ սթափ է...

Չմոռանանք, որ Համլետը և Էլսինորը տարբեր բարձրությունների վրա են կանգնած, Համլետը կարող է ցնորված ձևանալ և Էլսինորը պատրաստ է ճանաչել նրան իրքն այդպիսին, մանավանդ որ դրանով ապահովագրում է իրեն: Ասենք, Էլսինորի դիտանկլունից նա իրոք որ ցնորված է: Էլսինորի համլետ նրա գործողություններն անըմբռնելի են, հոգումներն անպատճեն: Թատերզության մեջ կա Համլետի յուրօրինակ մի հակատիպը: Դա Լաերտն է: Բայց որում, նրան առանձին ոչինչի մեջ մեղադրել չես կարող: Անզամ Համլետին էլ նա մլուսներից ավելի արդար է գատում: Լաերտի հտեւից ամրոխը կզնա, Էլսինորի ու նրա մակարդակները անհավասար չեն:

Լաերտն իր ժամանակի զավակն է, Համլետը՝ գալիքի: Համլետը լի բռնում էլսինորի «առողջ դատողությանը»: Եվ քանի որ դա այդպես է, Համլետի համար բախտորոշ նշանակություն է ստանում ինքն իրեն հետ լինելու, կյանքի հետ իր այդ ներհակությունը, անհատի իր իրավունքները պաշտպանելու հանգամանքը: Համլետի սխրագործության իմաստը Հենց դրանում է:

Սակայն, նրա ճակատագիրը շարունակում է մնալ ողբերգական-էլսինորն ընդունել է նրա մարտահրավերը, Էլսինորը շտապում է դատասահ տեսնել, խեղճել նրա ըմբռստությունը, արմատախիլ անել նրա միտքը: Իհարկե, զրկել Համլետին մտածելու հնարավորությունից:

կոտրել նրա գիմադրությունը և իշեցնել նրան իր մակարդակին էլսինորն անկարող է; ինչպես Համլետն է անզոր տապալել էլսինորը, այնպես էլ վերջինս չի կարողանում սանձել նրա միտքը:

Եվ չնայած Համլետը գիտակցում է իր ողբերդական վախճանի անխուսափելիությունը, եթե գոտեմարտը սկսվի, չնայած իրոք որ ամեն ինչ կանխապես գիտե և նախազգում է (այս է Սմոկտունովսկու հերոսի ամենագլխավոր յուրահատկությունը), նա անվարան բախվում է Լաերտի, էլսինորի այդ հոգեհարապատ զավակի հետ:

Ու սկսվում է ողբերգության ամենախորհրդավոր պահը... Շեքսպիրի ստեղծագործության ժամանակակից անգլիական հետազողներից մեկը՝ Առնոլդ Կետլը «Համլետից» գիպի «Լիբր» խորագրով իր հոգվածում այսպես է մեկնաբանում Համլետի անցումը ոեֆլեկտիվայնությունից դեպի կոնկրետ գործողություն։ «Վերջին արարվածում Համլետն ինչ-որ շափով տեղի է տալիս էթիկական այն նորմաներին, որոնք մինչ այդ չեր ընդունում, որովհետև հրաժարվում էր պայքարել իրրե մարդ, բայց ոչ իրրե արքայազն։ Այդ տեղատվության շափը համապատասխանում է, ինչպես ես եմ կարծում, այն հնարավորություններին, որ հոմանիստներն ունեին 1600 թվականին իրենց մարդասիրական գաղափարները կենսագործելու համար»<sup>4</sup>:

Իրոք, որ նահանջն ակնհայտ է, սակայն դա բնավ էլ մարդու նահանջը չէ արքայազնի առաջ. Համլետ-Սմոկտունովսկին ապացուցում է, որ դա փիլիսոփայի նահանջն է մարդու առաջ:

Համլետի փիլիսոփայության պովիաթիվ հիմքը հավատամքն է մեծատառով մարդու հանդեպ։ Մարդն արժանավոր էակ է, բնության ստեղծած հրաշալիքը։ Սա ամեննեին էլ հայտարարություն չէ, Համլետն ինքն է ներկայանում իրրե մարդկային լավագույն հատկությունների մարմնացում։ Բայց մինմույն ժամանակ, մարդը մահկանացու է, «փոշու կվինտեսենցիան»։ Մարդն անկարող է պոկվել ոեալ իրականության հետ իր ունեցած կապերից։ Թող որ այդ իրականը խղճուկ է, բայց քամահրել այն անկարելի է։ Մարդը միշտ էլ մարդ է մնում, նա ոչ աստված է, ոչ սատանա։ Անհրաժեշտ է ծառայել այն պաշտոնում, որ տվել է քեզ պատմությունը։ Սեփական ժամանակի զավակը լինելու այդ կոչումը երեմն կարող է և շրավարարել քեզ, բայց դա քո կոչումն է այս աշխարհում։ Համլետը մեղք չունի, որ իրեն է վիճակվել սպանել Կլավդիոսին, վրիժառու լինելու հոր մահվան համար։ Համլետը մեղք չունի, որ

ուղ կոնկրետ նպատակը բնավ չի հարմարում նրա հոգեկան ավալներին, նրա մտքի շափերին։ Համբար երկար դիմագրեց այդ կոչմանը, նա միայն աֆեկտի մեջ կարսէ եթ շատակել իրազրծելու դաւ եվ սպանեց... Պոլոնիուսին։

Եվ ահա ժամն է ...Հատկանշական ու շատ կարեսր է, որ էլսինորի հետ իր առաջին ու վերջին բացահայտ կովում Համբար-Մոնկառնովսկիին աֆեկտի մեջ չի գտնվում։ Բանականությունը նրան չի դավաճանում։ Իր վախճանը նա ավելի շուտ է կոսում, բան կաերար դա կհայտնի նրան։ Ճիշտ է՝ Հորացիոյի օգնությամբ։ Համբար որսում է նրա սևոսուն հայցը, զգում, որ իր վերջն եկել է, եվ արդեն ամբողջովին կլանվում է մենամարտավլ Ֆիլմում, —այս հենց ֆիլմում, —Համբառն է առաջարկում ու ստիպում կաերարին փոխել սրերը։

Համբար զիսի է բնկնում, որ մոտեցել է այն պահը, երբ պիտի իրականացնի իր կյանքի միակ կոչումը։ Արդ, ուրեմն ասաց, կորցնելու այլս ոչինչ ունի եվ նրա ձեռքը չի դոզում...»

Սակայն որեւէ բավարարում դրանից նա չի ստանում։ Համբար-Մոնկառնովսկիին միանդամայն բնդունակ է կատարելու այն, ինչ պահանջվում է իրենից, բայց չի ցանկանում հանդամանքներին գերի լինել։ Նա ափսոսանը է զգում ո՛չ թէ այն բանի համար, որ ձգձգել էր Կլավդիոսի սպանությունը և այժմ ինքն այլևս գահ բարձրանալ չի կարող։ Ոչ, ամենեին, այդ չէ նրան տանջում։ Համբար-իսկական մարդն ափսոսում է, որ իր վայրկյանները հաշված են և ինքը շհասցըց անել ամենազիավորը։ Թերեւս առաջին անգամ հենց թատերզության և ֆիլմի ավարտակետում Համբար սկսում է հասկանալ, որ այնուամենայնիվ կա մի ուժ, որն ընդունակ է «աշխարհն իր շավդի մեջ զցել»։ Համբար շտապում է դուրս նետվել ամրոցից, օդ ծեծել եվ պարզում է իր ձեռքը, իհարկե, ոչ թէ Ֆորտինբրասին, որին նույնպես վազօրոք արդեն հասկացել էր (Ֆորտինբրասը, ինչպես և էլսինորը, իր ժամանակի ծնունդն է), այլ գալիք օրերին։ Նա խնդրում է Հորացիոյին պատմել աշխարհին ու հետնորդներին ճշմարտությունը...»

Բայց ի՞նչ է կտակում Համբառն իր հետնորդներին։ «Եինել, թէ շլինելո ըուծված խնդիրը, թե՝ ինչպես դիմագրության միջոց գտնել ընդդեմ այն ուժի, որ բեզնից զորել է։

Եերապիրը նախազգում էր գալիքը, այն ժամանակները, երբ մարդկային բանականությունը կկարողանա իշխել հանդամանքների վրա։ Եվ Համբար այդ բանական ուժի մարմնավորումն ու ավետումն է, ըմ-

րոստացած՝ հանդամանքների կույր ուժի գեմ: Նրա սխրանքն իր ինք-նությունը պահպանելու մեջ է, այն դիմադրության, որ նա ցույց է տա-լին իր բիրտ ժամանակին:

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. „Искусство кино“, 1965, № 9, էջ 59;
2. Նույն անգամ, էջ 78;
3. Նույն անգամ, էջ 74—75;
4. „Шекспир в меняющемся мире“, М., 1966, էջ 142.